

ՃԱՆԱԳԱՐ ՀԱՌԴՈՒԹԻՒՆ ՅԱՆԻ.

Անցեալ 1870 թուականում բաղդը վիճակեց զիս մի քանի ընկերների հետ գնալ ի տեսութիւն աւերակաց Մայրաքաղաքին Անույ՝ տան Բաղրատունեաց. մայիս ամսու սկիզբն էր, որ դուրս եկանք Աղէքսանդրապօլից, այդ օրը բաւականին օդը պարզ և մաքուր էր, որով կարողացանք երեկոյան ժամերգութեան ժամանակն հասանիլ Ղըշէկէն՝ գիւղը, որը հեռի է Աղէքսանդրապօլից վերստ (միոն) երեկոյեան իջեանցիք տեղւոյն ծխատէր բարեկրօն Վարապետ քահանայի տունը, որը մեծ ընդունելութիւն ցոյց տուեց մեզ, այդ տեղ գիշերելուց զկնի առաւօտեան նախաճաշիկ արինք, և շնորհակալութիւն տալով նոյն քահանային՝ աճապարեցինք անցանել Ախուրեան դետը, և այն մեծ դժուարութեամբ, վասն զի գարնանային սկիզբները լինելով՝ ջուրը չափից աւելի բարձրացած՝ և կատաղի ալիքներով էր քայլափոխում, երեկոյեան վեցերորդ ժամուն ժամանեցինք Ղըշէկէն գիւղը ի վանս Սրբոյն Յովհաննու նոյն միջոցում Գերապատիւ Առաջնորդն Վարուց վիճակի Գրիգորիս Ծայրագոյն Վարդապետն այստեղ եկած էր տեղւոյն Գարոցի շինութեան աղագաւ. ուստի շտապեցինք նորուն Արժանապատուութեան սուրբ աջը համբուրելու, որը օրհնութեամբ հանգերձ շնորհաւորեց զմեր գալուստը, հարցանելով նաև մեր անունը, աղբանունը և որտեղացի լինենք, որի հետ մի քանի ժամ խօսակցելուց, և Աղէքսանդրապօլում մի քանի հարկաւոր կէտերի վերայ հարցմունքներ անելուց զկնի՝ առանձնացանք մեզ համար պատրաստուած վանքապատկան մի սենեակում. ընթրիք պատրաստեցին տեղական ծառայքն մի քանի պատուական կերակուրներով. այն է հաճախ խաչիկ, բալիկ, խաչիկ, (ողոր) հաճախ, պանիր և այլն. այս կերակուրները, մանաւանդ թանով ապուրը, շատ խորթելի թուեցաւ մեզ, և արդէն իսկ չորս ժամաչափ յառաջ քաշած նեղութիւններս մոռանալով՝ շատ ուրախացանք, որ արժանի եղանք որջութեամբ սրբոյն Յովհաննու մեծահոգի վանքը տեսանելու, որին խիստ կը ցանկացինք, զիչրը խաղաղութեամբ հանգիստ առինք.

Առաւօտեան ժամերգութիւնից յետոյ՝ ուղղեւորեցանք դէպ յԱնի, Ղօշաւանք գիւղից մինչև ի նոյն տեղն երկու ժամաչափ ճանապարհ է. վերոյիշեալ Գերապատիւ Հայրը մի ուղեցոյց մարդ տուեց մեզ, վասն զի մենք ճանապարհին թէև անտեղեկակ չէինք, սակայն աւազակաց երկիւղը փոքր ինչ արգելադիմ էր լինում մեզ, որոնք ահարկու եղած են ըստ վկայութեան հաւատարիմ աղբուրների. Անույ տարաբաղգիկ աւերակները արդէն նոր սկսել էին կարմրիլ, որ մենք ճանապարհ ընկանք, և նախ քան ճանապարհ ընկնելներս՝ բաւականաչափ ուրախութիւն նկատուեալ մեր վերայ. բայց ինչ ժամանակ մերձեցանք Սուրբ Գէորգ և Մինաս զօրավարաց պատուականագոյն վանօրէից,*) որք կառուցուած են նոյն իսկ Ղօշաւանք գիւղի ներքև մի տափարակ տեղում, բոլորովին քայքայուած՝ և համարեայ անհետացած, այն բոլորում՝ բացորոշ զգացվում էր մեր վերայ մի խաւարամած տըրտմութիւն, կարծես մեր աչքերից թոր ի թոր արտասուեաց կաթիլներ ահամայից ճնշվում էին և թոթոթում կուրծքերս. այդ տեղէն անցնելով՝ գնացինք յԱնի. նախ և առաջ քաղաքամօր հիւսիսային զոռնովը մուտ գործեցինք Մայր Եկեղեցին, որոյ ճիշդ ձևն ունի նորակառուց Եկեղեցին Աղէքսանդրապօլու, մուտ գործելներուս միջոցում մի աղէտալի և ծանրատար տրտմութիւն հանդիպեց մեզ. և շատ ողբացինք, որովհետև մի քանի քարկտրող Հայ վարպետ Տաճիկ Հաղարապետներից դրամ առնելով՝ նոյն Մայր Եկեղեցւոյ ամենապատուական սիւնը հիմնադրատակ խորտակել էին, Տաճկաց Բէգի գերեզմանաքար շինելու նպատակաւ, աչքերս արցունքով լի, և սրտաբեկ հեռացանք այդ տեղէն, որ չը տեսնենք զայն, և փութանակի մեր ընկերի մէկի ձեռամբ մի նամակ առաքեցինք առ Գերապատիւ Գրիգորիս Հայրիկն, որպէս զի փութով ժամանեաւ մեզ Բաղրատունեաց մեծագործ Տաճարը անօրինաց անագորոյն բռնութիւններից աղատելու. իսկ մէք, որ այն ժա-

(*) Սոյն այս վանօրէից մօտ գտանվում է ևս Աշոտ Աղորմածի Գամբարանը այսպիսի արժանազորութեամբ Աշոտ Թագաւոր Հայոց.

